ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ՀՐԱՉԻԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Նազիկ Կարապետի Հարությունյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Պարգև Հովհաննեսի Գևորգյան**
	մանկավարժական գիտությունների թեկնածու **Անուշ Տոլիկի Մայիլյան**
Առաջատար կազմակերպություն՝	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հուլիսի 3-ին՝ ժամը 14^{00}-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի մանկավարժության 058 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ 8-րդ մասնաշենք, թիվ 208 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունիսի 3-ին:

058 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Ա.Փ.Ղազարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից կրթությունը հանդիսանում է մարդկային կենսագործունեության հիմնարար հենասյուներից մեկը՝ հանդես գալով որպես հոգևոր մշակույթի ինտեգրող և ընդհանրացնող արժեք, միաժամանակ, այն տնտեսական զարգացման առանցքային գործոն է: Կրթության համակարգն այլևս չի սահմանափակվում միայն գիտելիքի փոխանցման գործառույթով՝ այն դարձել է պետության սոցիալ-տնտեսական զարգացման, մրցունակության և ազգային ներուժի ձևավորման առանցքային հենասյուներից մեկը: Հենց այս համատեքստում բարձրագույն կրթության համակարգի կառավարման արդյունավետությունը ձեռք է բերում ռազմավարական նշանակություն՝ որոշելով ոչ միայն համալսարանների ներքին գործառույթները, այլև դրանց ինտեգրումը միջազգային կրթական տարածք: Քաղաքական և իրավական մշակույթների հետ փոխկապակցված՝ կրթությունը հանդես է գալիս որպես քաղաքացու անձնային և բարոյական հատկանիշների ձևավորման առանցքային գործոն՝ սերտորեն կապված հասարակական կյանքի հետ: Այս համատեքստում կրթությունը, որպես սոցիալական ինստիտուտ, միտված է ազգի մտավոր և բարոյական ներուժի ձևավորմանն ու զարգացմանը:

Տարբեր երկրներում ձևավորված կրթության կառավարման մոդելներն արտացոլում են պատմական, քաղաքական, մշակութային և ինստիտուցիոնալ առանձնահատկությունների համադրությունը՝ ստեղծելով բազմազան, երբեմն՝ իրարից խիստ տարբերվող համակարգեր:

Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծությունն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հենց այդ բազմազանության տեսանկյունից: Մի կողմից Հայաստանն է՝ հետխորհրդային անցումային պետություն, որը դեռ գտնվում է կրթության կառավարման բարեփոխումների և ինստիտուցիոնալ կայացման գործընթացում, մյուս կողմից Իտալիան՝ եվրոպական բազմադարյա համալսարանական ավանդույթներ ունեցող երկիր, որի կրթության համակարգը ներգրավված է բոլոնյան գործընթացում և եվրոպական կրթական քաղաքականության ձևավորման մեջ:

Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերը զարգացել են տարբեր պատմամշակութային միջավայրերում, ինչի արդյունքում ձևավորվել են կառավարման, համալսարանների ինքնավարության տարբեր մոտեցումներ: Միաժամանակ, երկու երկրներն էլ ներգրավված են բոլոնյան գործընթացի շրջանակներում իրականացվող կրթական գործընթացներում և ենթարկվում են ընդունված ընդհանրական պահանջներին՝ պահպանելով ազգային առանձնահատկությունները: Այս երկակիությունը ստեղծում է գիտական

հետաքրքրություն՝ պարզելու, թե երկու երկրներն ինչպես են արձագանքում նույնատիպ արտաքին և ներքին մարտահրավերներին:

Սույն հետազոտությամբ առաջին անգամ համեմատական վերլուծության են ենթարկվում Հայաստանի և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ստեղծման հիմնադիր երկրներից մեկի՝ Իտալիայի, բարձրագույն կրթության կառավարման համակարգերը, վեր են հանվում նմանություններն ու տարբերությունները, ներկայացվում են ձեռքբերումներն ու խնդիրները, որոնցով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է հանգամանորեն ուսումնասիրել և համեմատական վերլուծության ենթարկել Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները՝ ներկայացնելով դրանց նմանություններն ու տարբերությունները, ձեռքբերումներն ու խնդիրները:

Հետազոտության խնդիրները:

1. Ներկայացնել Հայաստանի և Իտալիայի կրթական քաղաքականությունը բարձրագույն կրթության ոլորտում:
2. Ներկայացնել Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի իրավական դաշտը:
3. Ուսումնասիրել և ներկայացնել երկու երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության առանձնահատկությունները:
4. Ուսումնասիրել և ներկայացնել Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգերը:
5. Ուսումնասիրել և վերլուծել երկու երկրում իրականացված և իրականացվող բարեփոխումները և դրանց ուղղությունները:
6. Ուսումնասիրել և ներկայացնել ECTS կրեդիտային համակարգի կիրառման առանձնահատկությունները Հայաստանում և Իտալիայում:
7. Ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերում կրթության որակի ապահովման գործընթացները:
8. Համեմատական վերլուծության ենթարկել Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները՝ վեր հանելով նմանություններն ու տարբերությունները:

Հետազոտության գիտական նորույթը: Ուսումնասիրվել և վերլուծվել են Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման

առանձնահատկությունները՝ ներկայացնելով դրանց նմանություններն ու տարբերությունները, ձեռքբերումները և խնդիրները:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող պետական կրթական քաղաքականությունները պայմանավորված են ոչ միայն կառավարման ինստիտուցիոնալ կառուցվածքով, այլև տվյալ երկրների պատմական զարգացման տրամաբանությամբ, սոցիալ-տնտեսական միջավայրով և կրթության համակարգերի ձևավորման գաղափարախոսական հիմքերով՝ արտացոլելով պետական կարգավորման և ինստիտուցիոնալ ինքնավարության փոխհարաբերությունների տարբեր մոդելներ:
2. Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի օրենսդրական – իրավական դաշտը հնարավորություն է տալիս բացահայտելու պետական կառավարման մարմինների իրավասությունների շրջանակը, կարգավորիչ և վերահսկողական գործառույթները, ինչպես նաև հաշվետվողականության և ինստիտուցիոնալ ինքնավարության առանձնահատկությունները:
3. Ակնառու են Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգերի տարբերությունները, դրանց կառուցվածքային և գործառնական առանձնահատկությունները, ֆինանսական ռեսուրսների բաշխման մեխանիզմները, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածների ներգրավվածության աստիճանը, ինչը հնարավորություն է տալիս համակարգայնորեն վերլուծելու ոլորտին բնորոշ հիմնախնդիրներն ու զարգացման միտումները:
4. Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի որակի ապահովման գործընթացներն ունեն կառուցվածքային և գործընթացային ընդհանրություններ, որոնք ձևավորվել են բոլոնյան գործընթացի շրջանակներում եվրոպական չափանիշների և ուղենիշների ներդրման արդյունքում՝ միաժամանակ արտացոլելով ազգային կրթական համակարգերին բնորոշ առանձնահատկությունները:
5. Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներն ունեն իրենց ռազմավարական ուղղվածությունը, համակարգային արդյունավետությունը և ազդեցությունը կրթության համակարգերի արդիականացման վրա՝ բացահայտելով ինչպես զարգացման ներուժը, այնպես էլ առկա կառուցվածքային և ինստիտուցիոնալ մարտահրավերները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Հետազոտության շրջանակներում իրականացվել է Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարմանն առնչվող նորմատիվ-իրավական ակտերի, ռազմավարական փաստաթղթերի և մասնագիտական գրականության

համակարգված և համապարփակ ուսումնասիրություն և վերլուծություն: Տարբեր տեսական մոտեցումների համադրության հիման վրա ձևակերպվել են գիտականորեն հիմնավորված եզրահանգումներ՝ ուղղված ոլորտի կառավարման առանձնահատկությունների և զարգացման միտումների բացահայտմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հիմնախնդրի վերաբերյալ կատարված հետազոտության արդյունքները կարող են ծառայել Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության կառավարման բարեփոխումների մշակման և իրականացման գործընթացներում, ինչպես նաև կարող են օգտագործվել կրթության կառավարման դասընթացներում և բարձրագույն կրթության ոլորտի հետազոտողների ու մասնագետների պրակտիկ աշխատանքում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, 7 աղյուսակներից, 3 գծապատկերներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 176 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, սահմանված են հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացված են հետազոտության գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության **առաջին գլուխը՝** վերնագրված **«ՀՀ բարձրագույն կրթության համակարգը»,** բաղկացած է վեց ենթագլխից, որոնցում ներկայացված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի ընդհանուր բնութագիրը, կառավարման առանձնահատկությունները, պետական վերահսկողության առանձնահատկությունները:

Առաջին՝ «ՀՀ բարձրագույն կրթության համակարգի նպատակը, խնդիրները, կառուցվածքը», ենթագլխում ներկայացված են ՀՀ բարձրագույն կրթության համակարգի նպատակը, խնդիրները, կառուցվածքը, գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների տեսակները, դրանց առանձնահատկությունները:

Երկրորդ՝ «Կրթական քաղաքականությունը և իրավական դաշտը Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում», ենթագլխում հանգամանորեն ներկայացված է ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում պետականորեն իրականացվող կրթական քաղաքականությունը, ինչպես նաև ուսումնասիրված և ներկայացված են բարձրագույն կրթության ոլորտը համակարգող իրավական

փաստաթղթերը, վերլուծված և ներկայացված են օրենսդրական դաշտում առկա բացերը, հակասությունները:

Երրորդ ենթագլուխը՝ վերնագրված **«Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորումը»,** բովանդակում է Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող ֆինանսավորման գործընթացի առանձնահատկությունները, ներկայացված են բուհերի ֆինանսավորման գործող մեխանիզմները, առկա խնդրահարույց դրույթները:

Չորրորդ՝ «ՀՀ միացումը բոլոնյան գործընթացին. Բերգենի կոմյունիկե. բարեփոխումները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում՝ բոլոնյան գործընթացի համատեքստում. ուղղությունները», ենթագլխում ներկայացված են Հայաստանի բոլոնյան գործընթացին միանալու նախադրյալները, ՀՀ կառավարության կողմից նախաձեռնված և իրականացված քայլերը՝ ԵԲԿՏ-ին անդամակցելու ուղղությամբ, Բերգենի կոմյունիկեի առանձնահատկություններն ու ՀՀ ստանձնած պարտականությունները՝ Կոմյունիկեի ստորագրումով, ներկայացված են ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում իրականացված բարեփոխումները՝ ըստ տարիների, կրթական աստիճանների:

Հինգերորդ՝ «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի կառավարման առանձնահատկությունները», ենթագլխում վերլուծված և ներկայացված են ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի կառավարման առանձնահատկությունները՝ պետական և բուհական մակարդակներում, նշված են կառավարման մարմինները, դրանց գործառույթները:

Վեցերորդ՝ «Հայաստանի բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացի առանձնահատկությունները», ենթագլխում ներկայացված են ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացի առանձնահատկությունները, մեխանիզմները, ոլորտում կատարված բարեփոխումների ազդեցությունը և հետևանքները բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացի վրա:

Ատենախոսության **երկրորդ գլխի** վերնագիրն է **«Իտալիայի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգը»:** Երկրորդ գլուխը կազմված է վեց ենթագլխից, որոնք բովանդակում են Իտալիայի բարձրագույն կրթության նպատակը, խնդիրները, կառուցվածքը, կառավարման առանձնահատկությունները, գործող կրթական աստիճաններն ու հաստատությունները, ֆինանսավորման և ընդունելության գործընթացների առանձնահատկությունները:

Առաջին ենթագլուխը վերնագրված է **«Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի նպատակը, խնդիրները, կառուցվածքը»:** Ենթագլխում ներկայացված են Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները, երկրում գործառնող բարձրագույն ուսումնական հաստատությունների տեսակները (համալսարաններ, արվեստի, երաժշտության ոլորտի ուսումնական հաստատություններ (AFAM), բարձրագույն

տեխնիկական ինստիտուտներ (ITS), լեզվական բարձրագույն դպրոցներ), դրանց առանձնահատկությունները:

Երկրորդ՝ «Կրթական քաղաքականությունն ու իրավական դաշտը Իտալիայի բարձրագույն կրթության ոլորտում», ենթագլխում ներկայացված են Իտալիայի բարձրագույն կրթության ոլորտում սահմանված պետական քաղաքականությունը, կիրառվող իրավական փաստաթղթերը, ակտերը, վերլուծված են դրանց հիմքերն ու կարգավորող գործառույթները:

Երրորդ՝ «Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորումը», ենթագլխում ներկայացված են Իտալիայի բարձրագույն կրթության ոլորտի ֆինանսավորման աղբյուրները, մեխանիզմները, վերլուծված և ներկայացված են ֆինանսավորման ձևերի առանձնահատկությունները:

Չորրորդ՝ «Իտալիան՝ բոլոնյան գործընթացի համահիմնադիր երկիր. բարեփոխումներն Իտալիայի բարձրագույն կրթության համակարգում», ենթագլխում ներկայացված են բոլոնյան գործընթացի առանձնահատկությունները՝ շեշտադրելով Իտալիայի, որպես համահիմնադիր երկրի առանձնահատկությունները:

Հինգերորդ՝ «Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի կառավարման առանձնահատկությունները» ենթագլխում ներկայացված է Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի կառավարման առանձնահատկությունները՝ պետական և ներբուհական մակարդակներով: Հանգամանորեն վերլուծված են կառավարման մարմինների գործառույթներն ու առանձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ գլխի վեցերորդ՝ «Իտալիայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացի առանձնահատկությունները», ենթագլխում ներկայացված են Իտալիայի բարձրագույն կրթության համակարգում որակի ապահովման գործընթացի առանձնահատկությունները, կիրառվող մեխանիզմները, համակարգող պետական և ներբուհական մարմինների գործառույթներն ու առանձնահատկությունները:

Ատենախոսության **երրորդ գլուխը** վերնագրված է **«Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները»** և բովանդակում է երկու ենթագլուխ՝ **«Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման նմանությունները»** և **«Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման տարբերությունները»,** որոնցում կատարված հետազոտական աշխատանքի արդյունքում վեր են հանված և ներկայացված երկու երկրի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման նմանություններն ու տարբերությունները:

Թեկնածուական ատենախոսությունն ավարտվում է 10 կետից բաղկացած եզրակացություններով:

3.1 Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման նմանությունները

Ուսումնասիրելով Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները, կարող ենք ներկայացնել երկու երկրի բարձրագույն կրթության կառավարման համակարգերում առկա նմանությունները՝ (Տե՛ս՝ Աղյուսակ 6-ում) համակարգի կառուցվածքի, կառավարման և կրթության բովանդակության դիտարկումով:

Աղյուսակ 6. Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման նմանությունները

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Հայաստան	**Իտալիա**
Բոլոնյան գործընթաց	
Ե՛վ Հայաստանը, և՛ Իտալիան միացել են բոլոնյան գործընթացին՝ դառնալով ԵԲԿՏ անդամ: Բոլոնյան գործընթացը երկու երկրում էլ իրողություն է:	
Կրեդիտային համակարգ	
Կրեդիտային համակարգը (ECTS) բոլոնյան գործընթացի կարևոր մասերից մեկն է, և կիրառվում է և՛ Հայաստանում, և՛ Իտալիայում:	
Բուհի կառավարում	
Ե՛վ Հայաստանում, և՛ Իտալիայում բուհի կառավարման գլխավոր գործադիր մարմինը ռեկտորն է: Գործում են նաև կառավարման կոլեգիալ մարմիններ:	
Որակի ապահովման գործընթաց	
Ե՛վ Հայաստանում, և՛ Իտալիայում գործում են բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կառույցներ: Երկու երկրում էլ մշակվել և կիրառվում են որակի ապահովման չափանիշներ և չափորոշիչներ, ինչպես նաև երկու երկիրն էլ առաջնորդվում է Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներով և ուղենիշներով՝ ՈԱԵՉՈՒ, կիրառվում են գնահատման արտաքին և ներքին մեխանիզմներ:	
Համադրելի որակավորումներ	
Ե՛վ Հայաստանում, և՛ Իտալիայում գործում են միջազգային ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի մաս կազմող Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոններ:	
Ուսանողական ինքնակառավարման մարմիններ	
Ե՛վ Հայաստանում, և՛ Իտալիայում գործում են ուսանողական կառույցներ: ՈՒսանողները մասնակցում են բուհի կառավարման գործընթացին՝ օրենսդրությանը և բուհի կանոնադրությանը համապատասխան:	
Ակադեմիական շարժունություն	
Երկու երկրում էլ գործում է Erasmus+ ծրագիրը, որի շրջանակներում ուսանողները և պրոֆեսորադասախոսական անձնակազմը հնարավորություն	

են ստանում փորձի փոխանակման, դասավանդման և ուսումնառության նպատակով մեկնել այլ երկիր:

3.2 Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման տարբերությունները

Ուսումնասիրելով Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները, կարող ենք ներկայացնել երկու երկրի բարձրագույն կրթության կառավարման համակարգերում առկա տարբերությունները (Տե՛ս՝ Աղյուսակ 7-ում):

Աղյուսակ 7. Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման տարբերությունները

ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Հայաստան	**Իտալիա**
Տարածք	
28,470 կմ^2	294,140 կմ^2
Բնակչություն (2026թ.-ի դրությամբ)	
2.937.053	59.006.733
Բուհերի քանակը (պետական և ոչ պետական)	
50 (Պետական՝ 27, որոնցից 15-ը՝ հիմնադրամ, 3-ը՝ ակադեմիա, 23-ը՝ պետական հավատարմագրում ունեցող ոչ պետական բուհեր):	99+164 (61-ը՝ պետական բուհեր են, 19-ը՝ ոչ պետական, 3-ը՝ տեխնիկական համալսարան, 3-ը՝ համալսարանական ինստիտուտ, 2-ը՝ համալսարան՝ օտարերկրացիների համար և 11-ը՝ հեռավար համալսարան, AFAM համակարգի մաս կազմող՝ 164 բարձրագույն ուսումնական հաստատություն:
Աշխարհի համալսարանների դասակարգումը, ըստ Կվակվարելի Սայմոնդսի (Quacquarelli Symonds World University Rankings (QS)), 2026 QS-ի՝ բուհերի գործունեության գնահատման հատուկ մեթոդաբանության հիմքում ընկած են հետևյալ ցուցանիշները. դասավանդողների պատրաստվածության մակարդակ, գիտահետազոտական գործունեության ակտիվություն, կրթության միջազգային հաղորդակցություն:	
Երևանի պետական համալսարան՝ 1001-1200	Politecnico di Milano՝ 98

Երկրի դասակարգումն ըստ Վեբոմետրիքսի (Webometrics Ranking of World Universities) (2026թ. մարտ) Webometrics-ի՝ բուհերի գործունեության գնահատման հատուկ մեթոդաբանության հիմքում ընկած են հետևյալ ցուցանիշները. ազդեցություն, հրապարակայնություն, գերազանցություն:	
ՀՀ բուհերից 46-ը ներառված են Webometrics-ի վարկանշային աղյուսակում: Առաջատարը Երևանի պետական համալսարանն է և գտնվում է 2700-րդ հորիզոնականում:	Իտալիայի 100-ից ավելի բուհեր ներառված են Webometrics-ի վարկանշային աղյուսակում: Առաջատարը Բոլոնիայի համալսարանն է և գտնվում է 83-րդ հորիզոնականում:
Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառուցվածքը	
Հայաստան	**Իտալիա**
Կառուցվածք	
• 1-ին աստիճան՝ բակալավրիատ (4 տարի) • 2-րդ աստիճան՝ մագիստրատուրա (1-2 տարի) • Հետբուհական կրթություն՝ ասպիրանտուրա - դոկտորանտուրա (3 տարի) Գիտությունների թեկնածուի աստիճան: Պահպանվում է նաև դիպլոմավորված մասնագետի որակավորումը, որը, օրենքի կարգավորմամբ, հավասարեցվում է մագիստրոսի աստիճանին:	• 1-ին աստիճան՝ բակալավրիատ (3 տարի) • 2-րդ աստիճան՝ մագիստրատուրա (1-2 տարի) • 3-րդ աստիճան՝ դոկտորանտուրա (Ph.D՝ 3-4 տարի) • Որոշ ֆակուլտետներում և մասնագիտությունների համար, օրինակ, բժշկություն, իրավագիտություն, գործում է ամբողջական, անընդհատ ուսուցում՝ 5-6 տարի տևողությամբ (ciclo unico):
Գնահատման համակարգերը	
Գնահատման 20 և 100-միավորանոց համակարգեր:	Գնահատման 30 և 110-միավորանոց համակարգեր:
Ֆինանսավորման համակարգը	
Հայաստանում ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են. • պետական բյուջե, • ուսանողների կողմից վճարվող ուսման վարձեր:	• Իտալիայում գործում է կատարողականի վրա հիմնված համակարգ: • Ֆինանսավորումը բազմաղբյուր է:
Իրավական կարգավորումը	

Հայաստանում կրթության ոլորտը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, հիմնական օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, առանձին բուհերի պարագայում նաև միջպետական համաձայնագրերով, բուհերի կանոնադրություններով:	Իտալիայում բարձրագույն կրթության համակարգը կարգավորվում է Իտալիայի Հանրապետության Սահմանադրությամբ, թիվ 240/2010՝ Ջելմինիի օրենքով, բուհերի կանոնադրություններով:
Բուհի կառավարման մարմինները	
Հայաստանում բուհերը կառավարվում են միանձնյա և կոլեգիալության սկզբունքների հիման վրա: Հայաստանում բուհի կառավարման մարմիններն են. Հոգաբարձուների խորհուրդ Գիտական խորհուրդ Ռեկտոր (ունի սահմանափակ լիազորություններ):	Իտալիայում բուհերը կառավարվում են միանձնյա և կոլեգիալության սկզբունքների հիման վրա: Իտալիայում բուհի կառավարման մարմիններն են. Ակադեմիական սենատ Վարչական խորհուրդ Ռեկտոր (կարող է ընտրվել նաև այլ բուհից, կարող է միաժամանակ կառավարել երկու մարմին) Գործում են նաև խորհրդակցական մարմիններ:
Հավատարմագրման գործընթացը	
Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում պարտադիր է ինստիտուցիոնալ հավատարմագրումը: Հայաստանում հավատարմագրումը բուհի ֆինանսավորման համար հիմք չի հանդիսանում:	Իտալիայում հավատարմագրվում են կրթական ծրագրերը: Հավատարմագրումը հիմք է հանդիսանում ֆինանսավորման տրամադրման համար:
Բարձրագույն կրթություն իրականացնող հաստատությունները	
Հայաստանում բարձրագույն կրթություն իրականացնող հիմնական հաստատությունները բուհերն են՝ պետական և մասնավոր:	Իտալիայում բարձրագույն կրթություն կարելի է ստանալ համալսարանական և ոչ համալսարանական սեկտորներում, AFAM համակարգում ներառված հաստատություններում, որոնցում մասնագետներ են պատրաստում կիրառական արվեստի, երաժշտության, պարի ուղղություններով: Գործում են նաև Բարձրագույն տեխնիկական ինստիտուտներ (ITS), Հեռավար

	համալսարաններ, Լեզվական բարձրագույն դպրոցներ:
Ընդունելության համակարգը	
Բակալավրիատում գործում է ընդունելության կենտրոնացված համակարգ: Մագիստրատուրայում / ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ընդունելության գործընթացը կազմակերպում և իրականացնում են բուհերը:	Գործում է ընդունելության Universitaly առցանց հարթակը: Կազմակերպվում է բաց՝ անսահմանափակ տեղերով և փակ՝ սահմանափակ տեղերով ընդունելություն: Ընդունելության գործընթացը հիմնականում կազմակերպում և իրականացնում են բուհերը:
Ակադեմիական շարժունություն	
Հայաստանում 2014 թվականից գործում է «Erasmus + ազգային գրասենյակը»՝ խթանելու ծրագրի մասնակից համալսարանների և առանձին անձանց փորձի փոխանակման և շարժունության գործընթացները:	2024 թվականին հիմնադրվել է Իտալական Էրազմուս ուսանողական շարժունակության ծրագիր՝ իտալական համալսարանների միջև, որի նպատակն է խթանել նորարարական, ավելի ճկուն և միջառարկայական ուսումնական ուղիների ստեղծումը՝ միաժամանակ ամրապնդելով գործընկեր համալսարանների միջև համագործակցությունը:

Աղյուսակային համեմատությունը ցույց է տալիս, որ Հայաստանը և Իտալիան ունեն նման նպատակային ուղղվածություն, սակայն գտնվում են համակարգային զարգացման տարբեր փուլերում: Հայաստանը ներկայացնում է դինամիկ, բայց դեռ ձևավորվող համակարգ, որտեղ առաջնահերթ են կառավարման արդյունավետությունը, ֆինանսավորման ճկունությունը և միջազգային չափանիշներին համապատասխանեցումը, ինչին միտված են նաև ընթացիկ բարեփոխումները:

Իտալիան հանդիսանում է կայացած, ինստիտուցիոնալացված համակարգի օրինակ, որտեղ կառավարման, ֆինանսավորման և որակի ապահովման մեխանիզմները փոխկապակցված են և գործում են երկարաժամկետ կայունության սկզբունքով:

Այս համեմատությունը ցույց է տալիս, որ Հայաստանի համար զարգացման հիմնական ուղղությունը ոչ միայն բարեփոխումների շարունակականությունն է, այլ նաև դրանց ինստիտուցիոնալ ամրապնդումը, ինչը

հնարավորություն կտա համակարգը դարձնել առավել կայուն, կանխատեսելի և միջազգային մակարդակում մրցունակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանգամանորեն ուսումնասիրելով և համեմատական վերլուծության ենթարկելով Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները՝ ներկայացնելով դրանց նմանություններն ու տարբերությունները, հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Երկու երկիրն էլ հանդիսանում են ԵԲԿՏ անդամ: Երկու երկիրն էլ կրթության ոլորտը դիտարկում են որպես առաջնային և կրթական քաղաքականության հիմքում դնում են հասարակության, հետևաբար նաև երկրի առաջանցիկ զարգացումը:
2. Իտալիայի բարձրագույն ուսումնական հաստատություններն ինքնավարության բարձր մակարդակ ունեն, իսկ Հայաստանում, թեև նշվում է ինքնավարության մասին, բայց պետական վերահսկողությունը բարձրագույն ուսումնական հաստատության կարևորագույն գործընթացներում ակնհայտ է:
3. Երկու երկրում էլ կիրառվում է ուսումնական գործընթացի կազմակերպման ECTS կրեդիտային համակարգը: Իտալիայում կիրառվում են նաև «Իտալական համալսարանների ուսումնական կրեդիտներ» (Crediti Formativi Universitari՝ CFU) և բացառապես AFAM հաստատություններում կիրառվող «Ակադեմիական վերապատրաստման կրեդիտներ» կամ «Ուսումնական ակադեմիական միավորներ»՝ CFA (Crediti Formativi Accademici), որոնք համարժեք են եվրոպական ECTS համակարգին:
4. Երկու երկրում էլ բարձրագույն կրթության ոլորտին տրամադրվող ֆինանսավորումն ուղղված է առաջանցիկ որակի ապահովմանը: Միաժամանակ Հայաստանում ֆինանսավորման հիմնական աղբյուրն ուսանողների կողմից վճարվող ուսման վարձավճարներն են, իսկ պետական ֆինանսավորման տոկոսը շատ ցածր է, իսկ Իտալիայում բարձրագույն կրթության համակարգը ֆինանսավորվում է բազմաթիվ աղբյուրներից:
5. Երկու երկրում կրթության որակի ապահովումն առաջնահերթություն է: Հայաստանում ուսումնական հաստատության որակի ապահովումն ու ֆինանսավորումը կապակցված չեն, իսկ Իտալիայում ուսումնական հաստատության որակի ապահովման գործընթացի առանձնահատկություններով պայմանավորված ֆինանսավորումն ավելանում կամ պակասում է:
6. Հայաստանում բարեփոխումների գործընթացը համակարգված սկսվել է բոլոնյան գործընթացին միանալու ժամանակահատվածում՝ ներառելով կառուցվածքային, կառավարման, բովանդակային փոփոխություններ: Նախաձեռնված բարեփոխումների գործընթացը ԵԲԿՏ ինտեգրման պահանջ էր և

նպատակաուղղված էր միջազգայնացման հնարավորություններ ստեղծելուն, մեր երկրի բարձրագույն կրթության համակարգը եվրոպականի հետ համադրելի և մրցունակ դարձնելուն:

7. Իտալիայում բարձրագույն կրթության համակարգը բարեփոխումների ենթարկվել է մի քանի անգամ, սակայն հիմնարար բարեփոխումների նպատակը ևս բոլոնյան գործընթացի անդամ-պետություն լինելն ու ինտեգրվելն է ԵԲԿՏ՝ միջազգայնացման գործընթացներով պայմանավորված:

8. Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի իրավական կարգավորումը հիմնված է կենտրոնացված պետական քաղաքականության և ազգային օրենսդրության վրա, մինչդեռ Իտալիայում այն ձևավորվում է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի սկզբունքներին համապատասխան՝ արտահայտվելով բուհերի ինստիտուցիոնալ ինքնավարության բարձր մակարդակով և կառավարման ապակենտրոնացմամբ:

9. Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ երկու երկիրն էլ ԵԲԿՏ անդամ են, երկու երկիրն էլ առաջնորդվում են Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներով և ուղենիշներով, գործում են միջազգային ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի մաս կազմող Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոններ, երկու երկրում էլ ուսանողները մասնակցում են բուհի կառավարման գործընթացին, երկու երկրում էլ գործում է ուսանողների ուսումնառության, պրոֆեսորադասախոսական կազմի փորձի փոխանակման և դասավանդման համար նախատեսված Erasmus+ ծրագիրը:

10. Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծության արդյունքում ակնառու դարձավ, որ կան տարբերություններ կառուցվածքի, գնահատման, կառավարման և ֆինանսավորման համակարգերի, հավատարմագրման գործընթացների, գործող ուսումնական հաստատությունների, բուհերի ընդունելության համակարգերի միջև:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. **Սաֆարյան Ք.Հ.,** Բարեփոխումներն Իտալիայի բարձրագույն կրթության համակարգում, «Կրթությունը 21-րդ դարում», ԵՊՀ, 2021, թիվ 2(6), էջեր 240-245
2. **Սաֆարյան Ք.Հ.,** Բարեփոխումները Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում՝ բոլոնյան գործընթացի համատեքստում, «Կրթությունը 21-րդ դարում», ԵՊՀ, 2022, թիվ 1(7), էջեր 217-224
3. **Սաֆարյան Ք.Հ.,** Իտալիայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացի առանձնահատկությունները, «Կրթությունը 21-րդ դարում», ԵՊՀ, 2023, թիվ 1(9), 228-234
4. **Հարությունյան Ն.Կ., Սաֆարյան Ք.Հ.,** Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները, «Կրթությունը 21-րդ դարում», ԵՊՀ, 2023, թիվ 2(10), էջեր 233-241
5. **Սաֆարյան Ք.Հ.,** Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացի առանձնահատկությունները. համեմատական վերլուծություն, «Կրթությունը 21-րդ դարում», ԵՊՀ, 2024, թիվ 2(12), էջեր 165-174
6. **Սաֆարյան Ք.Հ.,** Բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացի առանձնահատկությունները Հայաստանում, «Մանկավարժական միտք», Երևան, 2024, 3.4, էջեր 92-98
7. **Սաֆարյան Ք.Հ.,** Ընդունելության գործընթացի առանձնահատկություններն Իտալիայի բարձրագույն կրթության համակարգում, «Մանկավարժական միտք», Երևան, 2026, 1-2, էջեր 10-15

КРИСТИНЕ ГРАЧИКОВНА САФАРЯН
СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ УПРАВЛЕНИЯ СИСТЕМАМИ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В АРМЕНИИ И ИТАЛИИ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 3-его июля 2026 года в 14^{00} на заседании специализированного совета 058 по Педагогике Комитета по высшему образованию и науке РА, действующему при Ереванском Государственном Университете.

Адрес: РА, 0025, г. Ереван, улица Абовяна 52а, корпус 8 ЕГУ, аудитория 208.

АННОТАЦИЯ

Актуальность темы. Современное образование является одной из фундаментальных опор человеческой жизни, выступая в качестве интегрирующей и обобщающей ценности духовной культуры, и одновременно ключевым фактором экономического развития. Система образования больше не ограничивается лишь функцией передачи знаний, она стала одним из ключевых столпов социально-экономического развития государства, конкурентоспособности и формирования национального потенциала. Именно в этом контексте эффективность управления системой высшего образования приобретает стратегическое значение, определяя не только внутренние функции университетов, но и их интеграцию в международное образовательное пространство. Взаимосвязанное с политико-правовой культурой, образование выступает ключевым фактором формирования личностных и моральных качеств гражданина, тесно связанных с общественной жизнью. В этом контексте образование как социальный институт направлено на формирование и развитие интеллектуального и морального потенциала нации.

Модели управления образованием, сформированные в разных странах, отражают сочетание исторических, политических, культурных и институциональных особенностей, создавая разнообразные, порой очень разные системы.

Сравнительный анализ управления системами высшего образования Армении и Италии представляет особый интерес именно с точки зрения этого разнообразия. С одной стороны, Армения — это постсоветское переходное государство, которое все еще находится в процессе реформ в сфере управления образованием и институционального строительства; с другой стороны, Италия — страна с многовековыми европейскими университетскими традициями, чья система образования участвует в Болонском процессе и формировании европейской образовательной политики.

Системы высшего образования Армении и Италии развивались в различных исторических и культурных условиях, в результате чего сформировались разные подходы к управлению и автономии университетов. В то же время обе страны участвуют в образовательных процессах, реализуемых в рамках Болонского процесса, и подчиняются общепринятым общим требованиям, сохраняя при этом национальные особенности. Эта двойственность порождает научный интерес к изучению того, как две страны реагируют на схожие внешние и внутренние вызовы.

В данном исследовании впервые сравниваются системы управления высшим образованием Армении и Италии, одной из стран-основателей Европейского образовательного пространства, и выявляются сходства и различия, представлены достижения и проблемы, определяющие актуальность темы исследования.

Цель исследования:

Целью исследования является всестороннее изучение и сравнительный анализ особенностей управления системами высшего образования Армении и Италии, с представлением их сходств и различий, достижений и проблем.

Задачи исследования:

1. Представить образовательную политику Армении и Италии в сфере высшего образования.

2. Представить правовую основу систем высшего образования Армении и Италии.

3. Изучить и представить особенности автономии высших учебных заведений двух стран.

4. Изучить и представить системы финансирования высшего образования в Армении и Италии.

5. Изучить и проанализировать реформы, проводимые и реализуемые в двух странах, и их направления.

6. Изучить и представить особенности применения системы кредитов ECTS в Армении и Италии.

7. Изучить и проанализировать процессы обеспечения качества образования в системах высшего образования Армении и Италии.

8. Провести сравнительный анализ особенностей управления системами высшего образования Армении и Италии, выделив сходства и различия.

Научная новизна исследования:

Изучены и проанализированы особенности управления системами высшего образования Армении и Италии, представлены их сходства и различия, достижения и проблемы.

Представлены основные положения защиты:

1. Государственная образовательная политика, реализуемая в секторе высшего образования Республики Армения и Республики Италия, обусловлена не

только институциональной структурой управления, но и логикой исторического развития данных стран, социально-экономической обстановкой и идеологическими основами формирования образовательных систем, отражающими различные модели взаимоотношений между государственным регулированием и институциональной автономией.

2. Законодательно-правовая база систем высшего образования Армении и Италии позволяет определить сферу компетенции государственных органов, регулирующие и надзорные функции, а также особенности подотчетности и институциональной автономии.

3. Очевидны различия в системах финансирования высшего образования Армении и Италии, их структурно-операционные особенности, механизмы распределения финансовых ресурсов, а также степень вовлеченности государственного и частного секторов, что позволяет проводить систематический анализ проблем и тенденций развития, характерных для данного сектора.

4. Процессы обеспечения качества в системах высшего образования Армении и Италии имеют структурные и процедурные сходства, сформировавшиеся в результате внедрения европейских стандартов и руководящих принципов в рамках Болонского процесса, одновременно отражая специфику национальных систем образования.

5. Реформы, проводимые в секторе высшего образования Армении и Италии, имеют собственное стратегическое направление, системную эффективность и влияние на модернизацию систем образования, выявляя как потенциал развития, так и существующие структурные и институциональные проблемы.

Теоретическая значимость исследования:

В рамках исследования был проведен систематический и всесторонний анализ нормативно-правовых актов, стратегических документов и профессиональной литературы, касающихся управления системами высшего образования Армении и Италии. На основе сочетания различных теоретических подходов были сформулированы научно обоснованные выводы, направленные на выявление специфики управления сектором и тенденций развития.

Практическая значимость исследования:

Результаты проведенного исследования по данной проблеме могут послужить основой для разработки и реализации реформ управления высшим образованием в Республике Армения, а также могут быть использованы в курсах по управлению образованием и в практической работе исследователей и специалистов в области высшего образования.

Структура и объем диссертации: Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы, 7 таблиц, 3 диаграмм. Общий объем работы составляет 176 компьютерных страниц.

KRISTINE H. SAFARYAN

COMPARATIVE ANALYSIS OF MANAGEMENT OF HIGHER EDUCATION SYSTEMS IN ARMENIA AND ITALY

The dissertation for the degree of Candidate of Pedagogical Sciences in the speciality 13.00.01 - «Theory and History of Pedagogy» will be defended on 3th july 2026, at 14^{00} the session of Specialized Council 058 on Pedagogy of the Committee on Higher Education and Science of the Republic of Armenia, operating at Yerevan State University.

Address: Republic of Armenia, 0025, Yerevan, Abovyan str. 52a, 8th building of Yerevan State University, room 208.

SUMMARY

Relevance of the Topic. Modern education is one of the fundamental pillars of human life, acting as an integrating and generalizing value of spiritual culture, at the same time, it is a key factor in economic development. The education system is no longer limited only to the function of transferring knowledge, it has become one of the key pillars of the socio-economic development of the state, competitiveness and formation of national potential. It is in this context that the effectiveness of the management of the higher education system acquires strategic importance, determining not only the internal functions of universities, but also their integration into the international educational space. Interrelated with political and legal cultures, education acts as a key factor in the formation of the personal and moral qualities of a citizen, closely related to public life. In this context, education, as a social institution, is aimed at the formation and development of the intellectual and moral potential of the nation.

Education management models formed in different countries reflect a combination of historical, political, cultural and institutional features, creating diverse, sometimes very different systems.

A comparative analysis of the management of the higher education systems of Armenia and Italy is of particular interest precisely from the perspective of this diversity. On the one hand, Armenia is a post-Soviet transitional state, which is still in the process of educational management reforms and institutional establishment, on the other hand, Italy is a country with centuries-old European university traditions, whose education system is involved in the Bologna Process and the formation of European educational policy.

The higher education systems of Armenia and Italy have developed in different historical and cultural environments, as a result of which different approaches to governance and university autonomy have been formed. At the same time, both countries are involved in educational processes implemented within the framework of

the Bologna Process and are subject to accepted general requirements, while maintaining national characteristics. This duality creates scientific interest in finding out how the two countries respond to similar external and internal challenges.

This research, for the first time, compares the higher education governance systems of Armenia and Italy, one of the founding countries of the European Educational Area, and highlights similarities and differences, presents achievements and problems, which determine the relevance of the research topic.

Purpose of the research: The purpose of the research is to thoroughly study and comparatively analyze the management features of the higher education systems of Armenia and Italy, presenting their similarities and differences, achievements and problems.

Research Problems:

1. To present the educational policy of Armenia and Italy in the field of higher education.
2. To present the legal framework of the higher education systems of Armenia and Italy.
3. To study and present the peculiarities of the autonomy of higher education institutions of the two countries.
4. To study and present the financing systems of higher education of Armenia and Italy.
5. To study and analyze the reforms implemented and being implemented in the two countries and their directions.
6. To study and present the peculiarities of the application of the ECTS credit system in Armenia and Italy.
7. To study and analyze the processes of ensuring the quality of education in the higher education systems of Armenia and Italy.
8. To conduct a comparative analysis of the peculiarities of the management of the higher education systems of Armenia and Italy, highlighting the similarities and differences.

Scientific Novelty of the research:

The peculiarities of the management of the higher education systems of Armenia and Italy have been studied and analyzed, presenting their similarities and differences, achievements and problems.

The main provisions of the defense are presented:

1. The state educational policies implemented in the higher education sector of the Republic of Armenia and the Republic of Italy are conditioned not only by the institutional structure of governance, but also by the logic of the historical development of the given countries, the socio-economic environment and the ideological foundations of the formation of educational systems, reflecting different models of the relationship between state regulation and institutional autonomy.

2. The legislative and legal framework of the higher education systems of Armenia and Italy provides an opportunity to identify the scope of competences of state government bodies, regulatory and supervisory functions, as well as the features of accountability and institutional autonomy.

3. The differences in the financing systems of higher education of Armenia and Italy, their structural and operational features, financial resource distribution mechanisms, as well as the degree of involvement of the public and private sectors are evident, which allows for a systematic analysis of the problems and development trends characteristic of the sector.

4. The quality assurance processes of the higher education systems of Armenia and Italy have structural and procedural commonalities, which were formed as a result of the introduction of European standards and guidelines within the framework of the Bologna Process, while simultaneously reflecting the specific features of the national educational systems.

5. The reforms implemented in the higher education sector of Armenia and Italy have their own strategic direction, systemic effectiveness and impact on the modernization of the education systems, revealing both the development potential and the existing structural and institutional challenges.

Theoretical significance of the research:

Within the framework of the research, a systematic and comprehensive study and analysis of normative-legal acts, strategic documents and professional literature related to the management of the higher education systems of Armenia and Italy was carried out. Based on a combination of different theoretical approaches, scientifically substantiated conclusions were formulated aimed at identifying the specifics of the management of the sector and development trends.

Practical significance of the research:

The results of the research conducted on the issue can serve in the development and implementation of higher education management reforms in the Republic of Armenia, as well as can be used in education management courses and in the practical work of researchers and specialists in the field of higher education.

Structure and volume of the dissertation: The dissertation consists of an introduction, three chapters, conclusions, a list of used literature, 7 tables, 3 diagrams. The total volume of the work is 176 computer pages.